ՄԱՄՈՒԼ

Անցեալները նկատեցինք, որ գրերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակի շուրջը ծագած վէճի առթիւ գաւառն էլ է արձագանգ տալիս, գաւառում ևս բողոքում են Էջմիածնի անտեղի ու վնասակար ինքնիշխանութեան դէմ։ Երևանում հրատարակուող „Կոչն" շաբաթաթերթի խիստ կարծիքը Էջմիածնի ոտնձգութիւնների դէմ մեր ընթերցողներին արդէն յայտնի է. այսօր էլ «Ղարաբաղը» իր № 57-ի առաջնորդողում քննութեան առնելով նոյն հարցը գտնում է.

„որ Տփխիսի յանձնաժողովի որոշումը կամայական չէ, այլ հիմնուած է պատմական փաստի վրայ. ամբողջ հայութիւնը թող գիտակցէ որ իր կուլտուրական գոյութեամբ պարտական է նոյեմբերի 26-ին կատարուած մեծ գիւտին"։

Ապա մեղմ կերպով, նոյնիսկ զսպուած նկատում է, որ Էջմիածինը միայն „խիստ պաշտօնական բնաւորութիւն է տալիս տօնին և զրկում է նրան համազգային և շքեղ լինելուց" և ուրիշ ոչինչ։

Անշուշտ տօնի բնաւորութիւնը «պաշտօնական» է լինելու. սակայն „Էջմիածնի ինքնագլխութիւնն է", որ պաշտօնական չպիտի լինի. ահա թէ ինչ է մոռանում կամ աւելի շուտ մոռացութեան տալիս „Ղարաբաղ"-ը, որ չպիտի անէր։

Այնուհետև „Ղարաբաղը" ևս ճիշտ եզրակացութեան է յանգում գրելով։

„Ցանկալի է միանգամայն, որ Տփխիսի և Էջմիածնի միջև ծագած թեր և դէմ կարծիքները, ինչպէս և պառակտող ույժերը, ջլատող տարաձայնութիւնները վերանային ընդմիշտ, իսկ դպրոցական և գրական ֆոնդերը շաղկապուէին իրար հետ այնպէս, ինչպէս գրերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը։

Լաւ կը լինէր, որ մեր գաւառական միւս թերթերը ևս արտայայտուէին այս խնդրի առթիւ։

* * *

Թաւրիզում հրատարակուող «Միտք» շաբաթաթերթի № 21-ն է մեր ձեռքում. շատ ծանր տպաւորութիւն է թողնում. ինչ որ սխոլաստիկ, նեղ, միտումնաւոր և որ գլխաւորն է, անբարեխիղճ վերաբերմունք ենք տեսնում շօշափած խնդիրների ու հարցերի վերաբերմամբ։ Թաւրիզի պէս մի տեղ, ուր հնարաւորութիւն կայ էլ աւելի ազատ մտածելու, քան թէ արտատըպութիւն անել Թիֆլիզում հրատարակուող կղերական „Հովիտից", իսկապէս որ նման թերթի գոյութիւն միայն անկեղծ ցաւ կարող է պատճառել։